ՓՈՒՐՄՈՎԱՄՄԱԴԻ ՓԱՐԻՍԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ԺԳ.-ԺԴ. ԴԴ.)

1225 թ. Ջալալէդդինի Անդրկովկասյան արշավանքը քաղաքականապես ցնցեց Հայաստանն ու հարվածի տակ դրեց երկրի տնտեսությունը, շինարարությունն ու առևտրամշակութային կյանքը:

Դրան հաջորդած 1236 թ. մոնղոլների ներխուժումը շփոթմունք առաջացրեց Զաքարյանների շնորհիվ ասպարեզում հայտնված Պռոշյան, Վաչուտյան և Օրբելյան իշխանական տոհմերի քաղաքական կեցվածքում: Հարվածին անպատրաստ՝ նրանք հնազանդվեցին, փոխարենն արժանացան մոնղոլ զորապետների կողմից ժամանակին իրենց տրամադրված տիրույթների անխաթար պահպանության, անձեռնմխելիության, ապահարկության և ինքնուրույն իրավունքների շնորհմանը:

Իրողությունը Կիրակոս Գանձակեցին այսպես է բնութագրում. «...զի ոչ ոք էր, որ ընդդէմ կայր նոսա, կամ պատերազմէր ընդ նոսա»[1]: Իսկ Վարդան պատմիչն ավելացնում է. «...ի սուղ ժամանակս անվաստակ եւ առանց աշխատութեան, զի գիտասցուք, եթէ ձեռն Տեառն է որ եւ զաշխարհս մեր առաջի աչաց մերոց կերակուր օտարաց»[2]:

Հայ ժողովրդի պատմության այս ժամանակահատվածն ընդհանրապես համարվում է աղուտ լուսաբանված պատմափուլերից մեկը: Ժամանակին այդ մասին Գարեգին արքեպ. Հովսեփյանը գրել է. «Հէնց այդ շրջանը (խոսքը ԺԳ.-ԺԴ. դդ. է վերաբերում. Փ. Փ.) իբրեւ ամբողջականութիւն քիչ է ենթարկուած գիտական ուսումնասիրութեան այն հասկանալի պատճառով, որ աղբիւրները ցրուած են և ոչ բաւարար չափով օգտագործուած: Բայց այդ հնարաւոր է վերականգնել երկարատեւ եւ կարգաւորեալ աշխատանքով, այլեւ կարելի կլինի անցեալի մի գեղեցիկ խճապատկեր ստանալ, եթէ բաղկացուցիչ քարերը խնամքով հաւաքուեն և յաջողութեամբ դասաւորուեն իրենց տեղերում»[3]:

Անկասկած, գիտնականը աղբյուրների ցանկում նկատի է ունեցել հիշատակարանները, մատենագրական ու վիմական հիշատակագրությունները: Այս ամենին պիտի ավելացնել 1950 թվականից Հայաստանում իրականացված հնագիտական պեղումնե-

1 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխ. Մելիք Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 254:

2 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», Ս. Ղազար, 1862, էջ 147:

3 **Գարեգին արքեպ. Յովսէփեան**, Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մասն Ա., Վաղարշապատ, 1928, յառաջաբան:

րի արդյունքները, որոնք իբրև ընկերային բազա երկրի տնտեսական, քաղաքական ու առևտրամշակութային կյանքում ունեին կարևոր դերակատարություն՝ ընդգծելով մոնոդոլական տիրապետության ընդհանուր միջավայրում Հայաստանի մշակութային մասնակցությունն ու երկրների շարքում զբաղեցրած տեղը:

Հ. Մանանդյանն ուշադրությունը կենտրոնացրել է միջազգային տարանցիկ այն ճանապարհին, որով Եւրոպան Փոքր Ասիայով կապվում էր Հուլաղույան մայրաքաղաք Թավրիզին, ապա Միջին Ասիայով հասնում Չինաստան[4]: Այդ շարակարգում նա Հայաստանը Թավրիզի հետ կապող օղակներ էր համարում Արճեշը, Մանազկերտն ու Մուշը՝ այդ ամենը հիմնավորելով եւրոպական ճանապարհորդների նոթերով ու վիմագրական փվյալներով[5]: Ժամանակն է հնագիտական գյուտերով վավերացնելու հնուց հայտնի Դվին-Պարտավ ճանապարհի Վայոց Ձորով անցնող գծամասի կրկին աշխուժացման իրողությունը ԺԳ-ԺԴ. դդ., որն, անշուշտ, նյութ չլինելու պատճառով, ժամանակին ակադեմիկոսի ուշադրությանը չի արժանացել:

Հիշատակված ժամանակաշրջանում ճանապարհի այդ գծամասը, ինչպես կտեսնենք, հատել է Սյունիքը, Որոտան գետի երկայնքով հասել Նախիջևան, ապա Թավրիզ և շարունակել ճանապարհը Միջին Ասիա և Չինաստան:

Հայտնի է, որ Սյունիքը հնուց ի վեր տարածաշրջանի աշխարհաքաղաքական կարևոր միավորն էր և երկրի ընդհանուր պաշտպանության ապահովման համար ուներ ռազմավարական կարևոր նշանակություն: Բավական է անդրադառնալ Հայաստանում Սասանյանների ժամանակ Ձորանամակում հիշատակվող այն փաստին, որ հայկական զորքը համալրող հեծելազորի ցուցակում քանակական առումով (19400) առաջին տեղում էր Սյունիքը[6]:

Այդ գործոնը չի շրջանցել և ԺԳ-ԺԴ. դդ., երբ արդեն քաղաքական այլ միջավայր էր, և տարածաշրջանը կարևոր դերակատարում ուներ առևտրամշակութային առնչությունների և հաղորդակցման առումով: Ելնելով մեր տրամադրության տակ եղած նյութերի ուսումնասիրությունից՝ պիտի ընդունել, որ Դվին-Պարտավ ճանապարհը Վայոց Ձորում երկճյուղվում էր, և եթե գծամասերից մեկը Սելիմով-Կոթով ուղեւորվում էր Պարտավ, ապա երկրորդ ճյուղը Սյունիքի տարածքով անցնում էր Որոտանը, հասնում Նախիջևան, Թավրիզ:

Առևտրական այդ ճանապարհները քարավանային բնույթի էին, և մոնոդոլներն այդ զբաղմունքին կարևոր նշանակություն էին հատկացնում՝ իբրև երկրի տնտեսական հզորացման ու բարգավաճման կարևոր լծակ: Քաղաքային էր այդ մշակույթը և խթանվում էր ոչ միայն առևտրականների, այլև արհեստավորների միջոցով: Պատահական չէ, որ ԺԳ-ԺԴ. դդ. արդեն Հայաստանում հայտնվում են ընկերություններ, որոնց համախմբում էին արհեստները, առևտուրը, արտադրական կարողություններն ու շահերը[7]:

4 Տե՛ս **Я. Манандян**, *О торговле и городах Армении в связи с мировой торговл*, Е, 1954, էջ 300:

5 Տե՛ս անդ:

6 Տե՛ս **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, Е, 1971, էջ 263:

7 Տե՛ս **А. Хачатрян**, *Трехьязычная надпись из Елегиса: "Кавказ и Византия"*, т. 3, Е, 1982, էջ 124-134:

Բերենք օրինակներ մատենագրական աղբյուրներից, որոնք վավերացնում են ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում հայկական առևտրականների գործունեության դաշտը: Օրինակ՝ Գանձակեցին հետևյալ բնութագրով է ներկայացնում. «Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական Ումեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին, այդ բարեգործ զոր երբեմն յիշատակեցաք»[8]:

Մեծահարուստ մեկ այլ առևտրական իր ծախսով և ձիերով 1264 թ. Հյուսիսային Կովկասից Թավրիզ, Հուլաղու խանի մոտ է հասցրել մի դեսպանություն՝ «ի յեօթն հարիւր երեքտասան թուին կոչեաց զմեզ մեծն Հուլաւու Էլդանն ի ձեռն Շնորհաւոր կոչեցեալ փառաւորելոյ առն յայն ժամանակի յամենեցունց և աւելի յաշխարհակալացն, ի Բաթու Կուսակալէն հիւսիսոյ, որ չոգաւն և պատուեցաւ նախ, ապա ի Հուլաւու Էլդանէն որ տարաւ իւրով ծախիւք և գրաստիւք զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք, եղբայրք մեր Սարգիս և Գրիգոր և աւագ երէցն Տփխեաց տէրտէրն»[9]:

Իսկ Հաղպատի 1261 թ. մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Գառնիում կային զուտ առևտրով զբաղվողներ. «Ի թվ[ին] ՉԺ. Կամաւն Ա[սպուծոյ] ես նուաստ ծառայ Ք[րիստոսի] Սարկաւագ վաճառական որդի Վրթանեսի Գառնեցոյ ապաւինեցայ ի սուրբ Նշանս Հաղբատայ և կազմեցի խաչ մի արծաթի ոսկեզարդ և բնափորդ նասիճ և ապրլաս վառ»[10]:

Ուսումնասիրվող թեման սերտորեն կապված է Հայաստանում այդ ժամանակաշրջանում տեղի ունեցող քաղաքական շրջադարձերի հետ, և անհնարին է թեկուզ հակիրճ չանդրադառնալ այդ իրադարձություններին: Տվյալ պարագայում շեշտադրումը Սյունիքի Օրբելյաններին է ուղղված, նրանց արգասաբեր գործունեությանը. շնորհիվ տարածքային ընդարձակման ձեռք բերեցին «կողմնակալության» մեծ իրավունքներ:

Մոնղոլական զորավարներից Ասլան Նոյինի արշավանքի ժամանակ Ելիկում Օրբելյանը ամրացել էր Վայոց Ձորի Հրաշկաբերդ ամրոցում և Նոյինի դեսպանության՝ դաշն կնքելու առաջարկին միանգամից համաձայնեց: Դաշնագիրը կնքվեց Գառնիում, և աղբյուրներում հիշատակվում են նրանց տարածքային հետևյալ սահմանները. «Կողմնակալ այսմ (իմա՛ Սյունյաց նահանգի իշխեցեալ ի Բարկուշատայ մինչև ցԳառնի)»[11]: Քաղաքական այդ գործոյթով Օրբելյաններն ավերածությունից փրկեցին ոչ միայն Սյունիքը, այլև ձեռք բերեցին նորանոր տարածքներ՝ Բջնին, Երևանը, Դվինը, Ուրծնը, Չիվան (Վեդիի շրջանում):

Իհարկե, Արարատում Պռոշյաններին վերաբերող 1214 թ. մի արձանագրություն կա, ուր հիշատակվում է տարածքային նույն բնորոշումը. «կողմնապահ ի Գառնոյ մինչև ի

8 **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 363:

9 **Վարդան Բարձրբերդցի**, նշվ. աշխ., էջ 156-157: Ի դեպ, Մ. Էմինը Շնորհավոր բառը մոնղոլերեն նույնացնում է խության հետ, որն, ըստ նրա, մոնղոլները տալիս էին հարուստ առևտրականներին: Տե՛ս **К. Патканов**, *История монголов по армянским источникам*, СПб., 1873, էջ 16:

10 **Կ. Ղաֆադարյան**, Հաղպատ: Միջնադարյան հուշարձանները և արձանագրությունները, Երևան, 1963, էջ 166-167:

11 «Դիվան հայ վիմագրության. 3», Երևան, 1960, էջ 149-150: «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանեան, Էջմիածին, էջ 94, 1251 թ:

Բարգուշատայ»[12]: Սակայն, ինչպես երևում է, Ելիկումի և նրան հաջորդող Վասակ և Տարսայիճ իշխանների օրոք այդ գարաձքները պատկանում էին Օրբելյաններին:

Մոնղոլ խաների մոտ Օրբելյանները ձեռք բերած իրավունքների հաշվին ընդարձակեցին իրենց գարաձքները, նվաճեցին այլ իշխանների իրավասության տակ գտնվող հոգևոր օջախները: Մեր ուսումնասիրության սահմաններից դուրս է այդ իրողությունների մեջ խորանալը, միայն ընդգծենք, որ Օրբելյաններն այնքան էին հզորացել, որ մոնղոլների հովանավորության շնորհիվ Սմբատի իշխանության ժամանակ դուրս եկան Զաքարյանների և վրացիների նկատմամբ ունեցած պարտավորությունից, իրենց վերապահելով գերակա դիրք հայ իշխանական տոհմերի շրջանում: «Ի դուրս յամենայն դաւթարաց ի վրաց և յայլոց»[13] արտահայտությունն արդեն իսկ վկայում է, որ նրանք Տերունի կարգավիճակով անմիջապես ենթարկվում էին մոնղոլներին: Այս ամենի հետևանքով ԺԳ. դարի 50-60-ական թվականներից Դոռշյանների, Զաքարյանների և Վաչուտյանների հանդեպ թաքուն օտարացումը վերածվեց բացահայտ թշնամանքի: Օրբելյանների հզորությունը դրսևորվեց նաև հաղորդակցության ուղիների հանդեպ ունեցած իրավունքներով, իրենց պատկանող քարավանատներով, որով հսկվում էր ճանապարհների անվտանգությունը, ապահովվում տարածաշրջանի խաղաղությունը, նպաստում առևտրական հարաբերությունների զարգացմանը:

Դվին-Դարտավ ճանապարհը, որ վաղ միջնադարից տարածաշրջանի ռազմավարական և առևտրային նշանակության կարևորագույն զարկերակն էր, ԺԳ. դ. վերջին և հաջորդ դարում շարունակեց պահպանել իր կարևորությունը, մասնավորապես, Արարատյան նահանգից դեպի Վայոց Ձոր ու Սյունիք հասնող հատվածում: Արաբ ճանապարհորդները հիշատակում են այս գծամասի Սիսաջան կայանը, որին առանձին ուսումնասիրության են արժանացրել Թ. Հակոբյանն ու Բ. Հարությունյանը[14]. տվյալ պարագան հետաքրքիր է այն իմաստով, որ այստեղից էին երկճյուղվում ճանապարհները: Սակայն մինչ Վայոց Ձոր հասնելը՝ հետևենք այդ գծամասում գործող կայաններին, որոնք Արարատյան նահանգում էին և հնագիտորեն ԺԳ-ԺԴ. դդ. նյութական մշակույթի արդյունքներով այսօր արդեն հայտնի են:

Գառնի գյուղաքաղաքն ու ամրոցը տվյալ ժամանակաշրջանում Օրբելյանների տիրույթի սահմաններում էր: 1949-ից այստեղ սկսված և մինչև վերջերս իրականացված պեղումների վերին շերտերում Հուլաղույան դրամների, ջնարակած ու հախճապակի խեցեղենի առատ հավաքածոներ կան: Նյութի հետազոտությունը վավերացնում է մոնղոլական տիրապետության ընդարձակ սահմաններում ընդգրկված երկրների հետ բնակավայրի սերտ շփումները՝ ի նպաստ մշակութային առնչությունների ու փոխազդեցությունների:

Ճանապարհի հաջորդ կայանը՝ Երևանը, թերևս, ոչ բավարար ուսումնասիրութ-

12 **Գարեգին արքեպ. Յովսէփեան**, նշվ. աշխ., էջ 35, նկ. 2, 68, 138:

13 «Պատմութիւն նահանգին Սիսական, Արարատ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի», Թիֆլիս, 1910, էջ 411:

14 Տե՛ս **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 86-100, **Բ. Հարությունյան**, Դվին-Դարտավ ճանապարհի Sisajan-Gelakuni գծամասը. ՊԲՀ, 1968, թ. 1, էջ 213-220:

յան արդյունքում հայտնի է միայն Հուլաղույան դրամագյուտերով, որն այնուհանդերձ կարևոր է ժամանակաշրջանի դրամաշրջանառության որոշակի պատկերը ներկայացնելու համար:

Մղոնաչափքում հիշատակություն չկա այն մասին, որ ճանապարհի հատման Երևան կետում խաչվում էր Արագածոտնից հասնող ճանապարհը, բայց նյութական մշակույթի մնացորդներով այդ իրողությունն այսօր վավերացվում է: Արագածոտնը Զաքարյանները Վաչուտյաններին են շնորհել սյուգերենի ու վասալի վերաբերյալ գոյություն ունեցող հարաբերություններով, սելջուկների դեմ նրանց ցուցաբերած անձնվեր գործողությունների համար:

ԺԳ-ԺԴ. դդ. այդ իշխանական տոհմերի հարաբերությունները ստացան նոր որակ: Իշխանական մյուս տոհմերի պես՝ Վաչուտյանները հնազանդվեցին մոնղոլներին, և այդ ենթարկվածությունն արտահայտված է Հովհաննավանքի արձանագրություններից մեկում. «Հաճոյ եղե(ա)լ այլազգի զաւրացն նեստոդաց»[15]:

Ստեղծված խաղաղ իրավիճակը նպաստեց նահանգի հոգևոր և մշակութային կյանքի աշխուժացմանը: 1244-1255 թթ. ընթացքում կառուցվեցին Հովհաննավանքը, Սաղմոսավանքն ու Աստվածընկալը, իսկ բարգավաճ և բարեկեցիկ աշխարհիկ կյանքն ու իրավիճակը նկարագրում է Կիրակոս Գանձակեցին՝ ընդգծելով Կիլիկիայի Հեթում Ա.-ի այցելությունն ու ճոխ ընդունելությունը Քուրդ Ա. Վաչուտյանի նստոցում մոնղոլական խանի մոտ դեսպանության ուղևորության ժամանակ[16]:

Վաչուտյանների տիրապետության սահմաններում գոյություն ունեցող կենտրոններում որոշակի պեղումներ են իրականացվել (Ամբերդ, Ոսկեվազ, Ուշի, Վարդենուտ): Այդ ամենից գիտական շրջանառություն են վայելում Ամբերդի նյութերը[17]: Մասնակի ուսումնասիրության է ենթարկվել Ուշիի ներմուծած հախճապակին[18]:

Երևանից մեկնող հաջորդ կայանը Դվինն է, որն արաբ աշխարհագիրները համարում են ճանապարհի ելման կետը: Ընդունված է այն տեսակետը, թե մոնղոլների արշավանքի հետևանքով քաղաքը հիմնովին կործանվել է: Հայտնաբերված՝ ԺԳ-ԺԴ. դդ. Ուլու Դավիթ թագավորի դրամագյուտերը և ջնարակած խեցեղենի փարատեսակները առաջադրում են տեսակետը վերանայել:

Հիշենք՝ վիմական արձանագրությունները հավաստում են, որ Դվինը ևս այդ դարերում Օրբելյանների ենթակայության սահմաններում էր. «Կողմնակալ յայսմ նահանգի զոր եւ մեզ Աստուած ի Բարգուշատայ մինչ ի դաշտն Դվնայ»[19], և եթե առայժմ հնագիտական նյութը հնավայրում առատ չէ, ապա Դվինի հյուսիսային սահմաններում ամփոփված Տիկնունի ամրոցում 1984 թ., սոսկ մեկ տարվա պեղումներով ի հայտ է եկել

15 **Կ. Ղաֆադարյան**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 103, արձ. 50:

16 Տես **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 364-372:

17 Տես **Ս. Հարությունյան**, Ամբերդ, Երևան, 1978, նկ. 81: **Ա. Ժամկոչյան**, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX-XIV դդ., Երևան, 1981, էջ 126-127:

18 Տես **Ֆ. Բաբայան**, Ուշիի Ս. Սարգիս վանքի պեղումներից հայտնաբերված հախճապակին. «Հին Հայաստանի մշակույթը. XII», Երևան, 2002, էջ 103-107:

19 «Վիմական գարեգիր», էջ 114, 1272a:

ԺԳ-ԺԴ. դդ. նյութական մշակույթի հարուստ մի շրջանարան, որ թույլ է տալիս մտածել հասարակական կյանքի՝ այստեղ փոխադրվելու վերաբերյալ: Խաչաձև, ասպղաձև և այլ ձևավորումով հարյուրավոր շքաղյուսների առկայությունը ապացույց է, որ տեղում կառուցված աշխարհիկ շինությունը հարդարվել է ԺԳ-ԺԴ. դդ. ընդունված ճարտարապետական ոճով ու ճաշակով[20]:

Հաջորդ կայանը Վեղին էր՝ շրջակա բնակավայրերի հաղորդակցման ճանապարհների հանգուցակետը: Այդ ճանապարհներից մեկի ելքը Հայաստանի հին մայրաքաղաք Արտաշատից էր: Վերջին տարիներին այստեղ իրականացված պեղումներն ի հայտ են բերել մոնղոլական և թիմուրիդյան ժամանակաշրջանի (ԺԴ-ԺԵ. դդ.) խեցեղենի ստվար մի հավաքածու, որը հավաստում է տեղում կարևոր ու շեն մի բնակավայրի առկայությունը[21]: Մերձակա Ուրծն ու Չիվան, թեև հնագիտորեն հետազոտված չեն, սակայն վիմագրական հիշատակությունները[22], գյուղաքաղաքի ավերակները և եկեղեցու առկայությունը վստահեցնում են, որ ժամանակին այն եղել է քրիստոնյա հայ բնակչությամբ զբաղեցված մի երկրամաս:

Վայոց Ձորում Դվին-Պարտավ ճանապարհը երկճյուղվում էր արաբ աշխարհագիրների նշած Սիսաջան կայարանում:

Թ. Հակոբյանը[23] Սիսաջանը նույնացնում է հին Արփայի հետ (ներկայումս Արենի), որին համամիտ ենք հետևյալ առումներով: Նախ այնտեղ են հին Արփայի ավերակները, Տարսայիճի կառուցած դարբասը (ապարանքը)[24] և Ստեփանոս Օրբելյանի հիշատակած հզոր կամուրջը. «...Ջի ի գիւղն Առփա ի վերայ գետոյ կանգնեաց [տէր Սարգիս] կամուրջ զարմանալի տաշածոյ վիմօք, յոյժ բարձր և ընդարձակ և լայն հիացուցիչ տեսողաց բազում ծախիւք և անչափ աշխատութեամբ՝ հրամանաւ բարեպաշտին և մեծափառ իշխանին Տարսայիճին, որոյ վարձատրեսցէ Քրիստոս հազարապատիկ»[25]:

Կամուրջը ողջ տարածաշրջանի բնակավայրերն իրար հետ կապող հաղորդակցության մի օղակ էր, առևտրական և մշակութային շփումներն ապահովող կոմունալ շինարարության կարևոր մի կառույց, որի ապացույցն են վերջին տարիներին Ծապինում, Եղեգիսում և Վայոց Ձորի այլ տեղամասերից հայտնաբերված խեցեղենն ու դրամագյուտերը:

Եթե Վայոց Ձորից դեպի հյուսիս մեկնող ճանապարհը Սելիմով հատվում էր Կոթում ու շարունակվում դեպի Պարտավ, ապա մյուս գծամասը Ծղուկ գավառով, կտրում Որոտանը ու Նախիջևանից հասնում էր Թավրիզ:

Սյունիքն այդ դարերում ապրել է բարգավաճ ու զարգացած կյանքով: Էջմիածնի ձեռագրերից մեկում Ղազան խանի իշխանության տարիների կյանքի պատկերը հետևյալ

20 Տե՛ս **Ա. Ժամկոչյան**, Ճարտարապետական հարդարանքի նմուշներ Տիկնունի ամրոցից. ԼՀԳ, 1990, թ. 12, էջ 66-75:

21 Նյութերը մշակում է պ. գ. թ. Ն. Հակոբյանը:

22 Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 134, 1292:

23 Տե՛ս **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 191:

24 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 181:

25 **Ստեփանոս Օրբելեան**, նշվ. աշխ., էջ 429-430:

բնութագրումն ունի. «...վասն զի ի սորա ժամանակս խաղաղեցաւ երկիր իբրև զդրախտ Աստուծոյ»:

Իսկ Մաղաքիա արքեպ. Օրմանյանը, ամփոփելով Սյունիքի ընդհանուր կացությունը ԺԴ. դարում, գրել է. «Լաւագոյն կացութիւն մը կրիրէր Սիւնիքի կողմերը, որ արևելեան հայութեան կեդրոն դարձած էր Օրբելեանց իշխանութեան ներքև»[26]:

Քաղաքական, տնտեսական ու մշակութային ծաղկուն կյանքի վկան են ոչ միայն վանական համալիրները, այլ նաև աշխարհիկ կառույցների բուռն շինարարությունը. դրանցից մեկին առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել: Դա հնում Ծղուկ գավառի Հարժիք կարավանատունն է (ներկայիս Գորիսի շրջանում), որը ճարտարապետական առումով և հայերեն արձանագրության ընթերցմամբ բավարար չափով հետազոտված է, բացառությամբ պարսկալեզու արձանագրության, որը բոլորում է մուտքի ճակատը: Փորձել ենք առաջին անգամ վերծանել այն: Խիստ հողմնահարված լինելու պատճառով ընթերցումը թերի է: «Հիջրայի 700 [1300-1301] Իվան [Բուրթելյան] նրան շինություն քարավանատուն կառուցեց մաքրամաքուր լինի այս գինետունը, այս ջուրը Գյանջալի Սուլթան իսան, շեյխ Հասանալի Հովիվ Զաբիհ» (նկ.):

Նկ. 1

26 **Մաղաքիա արքեպ. Օրմանեան**, Ազգապատում, մաս I, Կ. Պոլիս, 1912, էջ 1726:

Հարժիք քարավանատունը «Կոտրած» է կոչվում, հավանաբար, կիսով չափ հողի մեջ թաղված լինելու պատճառով: Քարավանատան շրջակայքում կան քարե սյուներ, որոնք փարոսի պես ուղեցույց ուղեկալների դեր են կատարել ձմռան բուքերին գետ-հովիտներով, լեռնանցքերով անցնող առևտրականների համար: Հայերեն խիստ եղծված արձանագրությունից ընթեռնելի է միայն՝

ՉԿԸ. (1319) Ես իշխան Օրբէլ Բէշքէն[27]:

Բէշքէն և Իվան Օրբելյանները պայազատների Բուրթելյան ճյուղի իշխաններից էին, որոնց անունները հանդիպում են նաև Վաղուդնի վանքի Ս. Կարապետ եկեղեցու հյուսիսային պատի վերին մասում՝ կապված հյուրանոցի կառուցման հետ. «...վասն արեւշատութեան Պարոն Բուրթելին և զաւակացն իւր Բէշքէնին և Իվանէին»[28]:

Երկու արձանագրություններն էլ Ծղուկ գավառում կառուցված իջևանատների պատերին են: Դա վկայում է Բէշքէնի և Իվանի սեփականատիրական որոշակի իրավունքների մասին, իսկ միջնադարում աշխարհիկ նման կառույցները պետական մտածելակերպի և իրավական թույլտվության արդյունք էին: Այդ մասին Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում գրված է. «Թագաւորն է որ կարէ դիւան շինել և քաղաք եւ բերդ եւ մեծ գետոյ կանդարայ եւ հոգետուն եւ ի մեծի ճամփի եւ ի կապանի երկրին: Թէ իշխան կամենայ շինել նա թագաւորին հրամանով շինէ»[29]: Բուրթելի որդի Բէշքէնը, ըստ ԺԴ. դ. հիշատակարանի՝ եղել է պետական հայտնի գործիչ Իլղանության կենտրոն Թավրիզում, ապա Սուլթանիայում անցել զինվորական ծառայության մոնղոլական արքունիքում՝ մնալով հավատքով քրիստոնյա[30]:

Այժմ անցնենք ԺԳ-ԺԴ. դդ. նյութական մշակույթի վերլուծությանը, որի հիմնական առանցքը խեցեղենն է՝ ջնարակած ու հախճապակու տարատեսակներով: Նյութական մշակույթի այդ ոլորտը Հայաստանում ուներ հնամենի ավանդույթներ, բայց, ի տարբերություն նախորդ դարաշրջանների, առկա էր տեխնոլոգիական նոր մեթոդների կիրառում և հարդարման ոճերի բազմազանություն՝ թելադրված ժամանակի արվեստի ընդունված կանոններով և պատվիրատուի ճաշակով[31]:

Տեխնոլոգիական նորամուծությունն ալկալիական ջնարակների գործածությունն էր, որն, ի տարբերություն կապարային ջնարակի, սպիտակ ֆոնի վրա փռվում էր ապակյա թանձր շերտով՝ հնարավորություն ընձեռելով թափանցիկ ջնարակի

27 «Դիվան հայ վիմագրության», հ. II, Երեւան, 1960, էջ 80 (232):

28 Անդ, էջ 101:

29 «Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի)», Էջմիածին, 1918, էջ 16:

30 Տե՛ս **Լ. Խաչիկյան**, Սյունյաց Օրբելյանների Բարթելյան ճյուղը. «Բանբեր մատենադարանի», 9, Երեւան, 1969, էջ 173-180:

31 Ի դեպ, քիմիական ու սպեկտրալ անալիզների բացակայության պատճառով ճշգրտորեն դժվար է առանձնացնել տեղական ու բերովի նյութերը: Վերջինս իրականացված է տիպաբանական վերլուծության հնարավորություններով:

տակ արված նկարազարդումը դրսևորել գունային կոլորիտով և զարդի առանձնահատկությամբ:

Վերոհիշյալ հուշարձաններից հայտնաբերված խեցեղենը (ջնարակած ու հախճապակի) տեխնոլոգիական առումով և զարդաձևերի բովանդակությամբ բաժանվում է մի քանի խմբի, և հետազոտությունը հետևյալ պատկերն է ներկայացնում:

I խումբը բազմագույն ենթաջնարակային նկարազարդմամբ խեցեղենն է, որ հիմնականում հայտնաբերված է Գառնիի, Արտաշատի և Վայոց Ձորի Շատին և Եղեգիս հնավայրերից: Այդ խեցեղենի նկարազարդման համար օգտագործել են կանաչ և կապույտ ջնարակի համադրությունները, թեև քիչ չեն և բեկորներ, որոնք նկարազարդումն ամբողջացրել են դարչնագույն և մանուշակագույն ներկերը:

Գառնիից հայտնի բեկորների մակերեսին կապույտ ու կանաչ ներկերի համադրությամբ արված երկրաչափական զարդերը հորիզոնական կամ ուղղաձիգ գծեր, աղեղներ կամ գալարներ են: Կապույտ ու կանաչ ներկերի համադրությամբ է նկարազարդված թերի պահպանված մի թաս, որի ներքին դաշտը հիմնականում բուսազարդեր ունի՝ տեղ-տեղ աշխուժացված երկրաչափական գծերով: Վերջինս, կարծես, բաժանարարի դեր է կատարում բուսական մոտիվներն իրարից զատորոշելու համար:

Որոշ բեկորների վրա նկատելի է զարդերը հորիզոնական շարվածքով ներկայացնելու սկզբունքը: Թասերից մեկի հիմնական կապույտ ու կանաչ գուներանգներով արված էլիպսներն ու եռանկյունիներից բաղկացած շարքերը զուգահեռաբար հաջորդում են միմյանց: Նույն տեխնիկայով հարդարված մեկ այլ անոթի վրա նույն մոտիվը ճոխացված է արաբերեն արձանագիր հիշատակագրությամբ: Այս տիպի խեցեղենի զուգահեռները հանդիպում են նույն շրջանի Մերձվոլգյան հուշարձաններում[32]:

II խումբը փիրուզագույն ֆոնի վրա մուգ կոբալտով նկարազարդված և թափանցիկ ջնարակով պատած խեցեղենն է: Խեցեղենի այս տեսականին տարածում գտավ ԺԲ. դ. վերջերին Անդրկովկասում, Միջին Ասիայում և Մերձվոլգյան շրջանում, իսկ գործածության լայն տարածումը ԺԳ-ԺԴ. դդ. կապված է արտադրական գործընթացի համեմատաբար պարզությամբ և այս պայմաններում գեղարվեստական բարձր ճաշակով ձևավորված առարկաների ստացումով: Նյութերը հայտնաբերվել են Գառնիից, Ամբերդից, Շատինից, Եղեգիսից, Արտաշատից և Ուշից: Կոբալտով արված զարդերը բուսական և երկրաչափական բնույթի են, թեև կան և խիստ ոճավորված թռչնազարդերով նմուշներ:

Փիրուզագույն ֆոնի վրա սև կոբալտի թանձր ներկանյութով արված զարդե-

32 Տե՛ս **Булатов**, *Классификация Кашинной поливной керамики золотоордынских городов*, СА, 1968, 4, էջ 101-2, նկ. 1(5):

ը՝ տարբեր ձևավորումով ծաղկեփնջեր են՝ շերտագծերով առանձնացված ծաղկաշարքեր: Իսկ երկրաչափական մոտիվները բազմանկյուններ են՝ բեկբեկյալ գծերի խիտ հաջորդականությամբ, երբեմն ցանցկեն ձևավորումով կամ եղեւնաձև շարք կազմող հայտնի նմուշներով: Շատինից նույն տեսականիի բեկորներից մեկն ինքնատիպ զարդաձև է կրում: Շեղվելով վերոհիշյալ մոտիվներից՝ իրարահաջորդ սրտաձև գծապատկերաշարքը տեղ-տեղ աշխուժացված է նուրբ ցիրուցան տերևների համադրությամբ:

Այս խեցեղենի զուգահեռները զարդերի տարատեսակ մեկնաբանումով հայտնի են Մերձվոլգյան հուշարձաններից ԺԳ. դ. վերջի թվագրումով[33]: Վերջերս նույնատիպ խեցեղեն հայտնաբերվեց ԺԴ. դարով թվագրվող Հյուսիս-սեւծովյան Ազակ հուշարձանախմբում[34]:

III խումբ. ԺԳ. դ. վերջին և ԺԴ. դարում ջնարակապատ անոթների մակերեսը անգոբի գծազարդերով հարդարելու եղանակը գեղարվեստական նոր զարդամիջոց էր: Մեր տրամադրության տակ եղած քրեղանը Գառնիից է՝ քիչ թերի պահպանված, ելունդավոր շուրթով, օղակաձև հատակով: Հիմնական հարդարանքը ներքուստ անգոբով իրար հատող ուղղաձիգ գծաշարքերն են: 2007 թ. նմանատիպ անոթների մի ամբողջական հավաքածու է հայտնաբերվել Դվինի Միջնաբերդի հորերից մեկում[35]:

Խերսոնեսում այդ տեխնոլոգիայով հարդարված անոթները թվարկվում են ԺԳ. դ. երկրորդ կեսով՝ հավանաբար շարունակվելով ԺԴ. դարում[36]:

Եթե սպեկտրալ և քիմիական անալիզների բացակայության պատճառով վերոհիշյալ խեցեղենի տեղական և ներմուծած լինելու հանգամանքը կասկածելի է, ապա ստորև ներկայացվող անոթների բեկորների օտարամուտ ծագումը՝ միանգամայն հաստատուն:

IV խումբ. Չինական հախճապակի. Խեցեղենի այս տեսականին հայտնի է Գառնիից և Շատինից: Սպիտակ ֆոնի վրա չինական բնապատկերներն արված են սև կամ մուգ կապույտ ջնարակի վրձնահարվածներով: Ավելի սխեմատիկ տերևների ցիրուցան մի պատկեր է ներկայացված հախճապակու մեկ այլ բեկորի վրա: Շատինից հայտնաբերված մի անոթի բեկորի մակերեսին կոբալտով պատկերված է չինական արվեստին բնորոշ մի ծաղկեփունջ:

---

33 Տե՛ս **А. Якубовский**, *К вопросу о происхождении ремесленно промышленности Сарал Берке*, ИГАИМК, 1931, VIII 2-3, էջ 40, նկ. 21-23:

34 Տե՛ս **И. Белинский**, **А. Масловский**, *Импортная керамика Азака. "Поливная керамика Средиземноморья и Причерноморья", X-XVII вв.*, Киев, 2005, նկ. 8(4):

35 Նյութերը հրապարակված չեն:

36 Տե՛ս **С. Ушаков**, *Поливная керамика из комплексов XIII в. Северо-восточного района Херсонеса* (նույն ժողովածուն), նկ.16/2:

Կարակորումում և Խարախոտոյում նմանատիպ խեցանոթները ԺԴ. դարով թվագրվող շերտերից են, որով կարելի է թվագրել և այս բեկորները[37]:

V խումբ. Չինական սելադոններ. Այս խեցեղենի գյուտերը (մոտ 20 բեկոր) Գառնիից են. մի մասը՝ չինական խեցեգործության մեջ ընդունված լոտոսի տարբերակով ափսեի մասեր՝ երբեմն ալիքաձև գծերով կամ ուղղաձիգ ակոսապատումներով շրջանակված: Քիչ չեն և բջջավոր մոտիվներով հարդարվածները:

Դրանք հիմնականում հեռավոր Չինաստանի հյուսիսային խեցեգործական արհեստանոցների արտադրանքն են եւ համապատասխան զուգահեռներով թվագրվում են ԺԴ. դարով[38]:

Սակայն կան և սելադոնների Մերձավորարևելյան նմանակներ, որոնք պատած են կանաչ, դարչնագույն անփայլ ոչ մաքուր ջնարակով: Դրանց նմուշները հայտնի են Գառնիից և Եղեգիսից: Եղեգիսից գտնվածները կարևոր են, քանի որ հայտնաբերված են Հուլաղույան Արղուն խանի (1280-1291) և Աբու Սայիդի (1317-1335) դրամների ընդհանուր կոմպլեքսում[39], որը վավերացնում է ժամանակագրական պատկերը ԺԴ. դարով: Ենթադրվում է՝ դրանց արտադրության հնարավոր կենտրոնը Իրանն էր, ուր, հատկապես Սուլթանաբադում, շարունակվում էր հախճապակու արտադրությունը ընդհուպ մինչև ԺԵ. դար:

37 Տե՛ս **Е. Лубо-Лесниченко**, *Фарфоровые изделия из Хара-Хото. "Страны народы Востока"*, 1976, ес. 18, էջ 199-208:

38 Տե՛ս **R. Hobson, R. Hetherington**, *The art of Chinese potter*, London, 1923, էջ II:

39 Տե՛ս **Ն. Մելքոնյան, Ն. Ղակորյան**, Եղեգիսի 2001 թվականի պեղումները. «Հին Հայաստանի մշակույթը», XII, Երեւան, 2002, էջ 102: